



## ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆՅԱՆ

### ՀԱՅՐԵՆԱՍԱԵՐ ԵՎ ԷԶՄԻԱՇՆԱՍԱԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

**Ա**խճանվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռի արժանընափառ Գահակալը՝ Հովսեփյանց Գարեգին Ա. Կաթողիկոսը, որի գործունեությունն արժանի է հատուկ ուշադրության: Մենք ցանկանում ենք կանգ առնել հանգույցյալի հատկապես վերջին տարիների մի քանի բնորոշ գործերի վրա, որոնցից ցայտուն երեսը է նրա չերմ հայրենասիրությունը և նվիրված էջմիածնասիրությունը:

Պետրոս Ա. Սարացյան Կաթողիկոսի վախճանումից հետո, 1943 թվականի մայիսի 10-ին, Անթիլիասի (Լիբանան) Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան Մայր Տաճարում, ձայների շախշախիչ մեծամասնությամբ, Հովսեփյանց Գարեգին Սրբազնն ընտրվեց Կաթողիկոս Մեծի Տանը Կիլիկիո:

Այս ընտրությունից ուրախ էր Հայաստանյաց Եկեղեցին, որ, ահա, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի եռյակ զանգակների ղողանջով ավետիսը ծանուցանում էր ի լոր Ալսարհի: Ուրախ էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը, որովհետև Գահակալ էր ընտրվել Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու լուսավոր ճանապարհին Հետեւորդ, Հայ մտքի և արվեստի գանձարանի թաքոն Հարստությունները լույս աշխարհ հայտնաբերող գիտնական ու անխոնչ միսիրելի հոգևորական: Ուրախ էր և հայ ժողովորդը իմանալով, որ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնից հետո գարերով առաջնորդի դեր կատարած Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը վստահված էր մի բարձրաստիճան եկեղեցականի, որը բացի բացառիկ հոգեկան ու մտավորական արժանիքներից, ու-

ներ համապային Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի միաբանության բարձրաստիճան անդամներից լինելու առավելությունը, լինելով նաև նվիրյալ մի հարազատ զավակը Սովետական մեծ Միության անդուզ հոգատարությամբը օրեցօր բարգավաճով Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի:

Ժողովրդային այդ սուբախությունը մեծացավ, անհոնացավ և անհարազրելի համեմատությունների հասավ, երբ մոտ երկու տարի, այլևայլ պատճառներով Ամերիկայում հապաղելուց հետո, 1945 թվականի մարտին Բեյրութի ժամանեց և մանավանդ նույն թվականի ապրիլի 7-ին Հայրապետական օծում սահացավ Վեհափառը, Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարում:

Կիբանանի մայրաքաղաք Բեյրութի պողոտաները քի' շանգամ տեսել են մարդկային այնպիսի ծովածավալ բազմություն, եռուցուու, ոգեսորություն և պերճություն, որպիսին է եղել Վեհափառի ժամանման օրը՝ 1945 թվականի մարտի 23-ը: Հայ և ալլացեղ լիբանանցիների մի անհաշվելի բազմություն որոտագին ծափահարում էր նակուրայից (Լիբանանապաղեստինյան սահմանագլուխ) մինչև Անթիլիաս ճանապարհորդող Վեհափառին, որն անդադար օրհնում էր հանդիսատեսներին, անցնելով ի պատիվ իրեն կանգնած «Հայոթական կամարաների տակից», որոնց վրա գրվել էր՝ «Բարի՛ գալուստ Մեծի Տանն Կիլիկիո պատվական Հայրապետին»:

Նահրի հայկական թաղամասերի (Նոր-Հաջըն, Նոր-Մարաշ, Տիրո և այլն) հայերը, ըստ հայկական հինավորց սովորության, ոչխարներ մորթեցին և անուշաբույր ծաղկեներով լցրին Վեհափառի ավտոն, օրհնություն ստանալով նրանից, իսկ Անթիլիա-

սում աննախընթաց ցնծատուն էր: Լիբանա-նի այդ գյուղաքաղաքը, որ մինչև Հայ Կա-թողիկոսարանի, Մայր Տաճարի և Դպրութան-քի կառուցվելը ո՛չ մի շուրջ չէր ունեցել բա-ցի համեղ նարինչների ու բանանենիների կանչից, հիմա հպարտանում էր նրա հա-մար, որ մի փառավոր անցյալ ունեցող, աշ-խատասեր, ստեղծագործ ժողովրդի հոգեւոր ու մտավոր կենարունը՝ Կիլիկիայի գարավոր Կաթողիկոսությունը, իր միաբանության հետ, հաստատվել էր այդտեղ:

Տաճարի եռյակ զանգակների զողանշնե-րը զաշնալուր մի երգի մես տարածվում էին նարնջաստանների, Լիբանանյան լեռնե-րի և Միջերկրական ծովի կապույտ շրերի վրա, երբ ընտրյալ Կաթողիկոս Հովհանքյանց Գարեգին Սրբազն, աշխարհախոսմբ բազ-մության ոկեցցեաներով մուտք գործեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Տաճարից ներս:

Ժամանման օրվա հանդիսություններից ա-վելի փառաշուր և ավելի խորհրդավոր էր Գարեգին Հովհանքյանց Մեծի Տաճան Կիլիկիո Կաթողիկոս ձեռնադրության և օծման հան-դիսությունը, որ կատարվեց 1945 թվականի ապրիլի 7-ին, Անթիլիասի Մայր Տաճարում, ձեռամբ Կոստանդնուպոլիսի նախարար պատ-րիարք Զավեն Եղիայան, կաթողիկոսական տեղապահ Խադ Աշապահյան, Լիբանանի կաթողիկոսական փոխանորդ Արուավագդ Սյուրմելյան, Իրաքի նախարար Ուուքեն Մանայան, Դամասկոսի կաթողիկո-սական փոխանորդ Եփրեմ Տոհմունի և ե-ղիպտահայերի առաջնորդ Մամքրե Սիրուն-յան արքեպիկոպոսների և ի ներկայության պատվո Հյուրերի՝ Կիրանանի, Սովորական Միության, ԱՄՆ-ի, Անգլիայի, Թելգիայի, Շվեյցարիայի և այլ երկների գետպանների, ինչպես և Լիբանանում զտնվող բոլոր Հա-րանվանությունների (մարոնի, ղապահ, Հայ կաթոլիկ, Հայ բողոքական, Հույն օրթոդքս, Հույն կաթոլիկ, իսլամ, ասորի, Հրեա և այլն) ներկայացուցիչների:

Ես գտնվել եմ Բարգեն և Պետրոս կաթո-ղիկոսների օծման և ուստի հանդիսություն-ներում էլ, բայց Հովհանքյանց Կաթողիկոսը կատարյալ խորհուրդ էր, երբ իր սրբազն ուստուն էր կատարում, ազգարարելով. «Գա-րեգին ծառայ Յիսուսի Քրիստոսի, միաբան Սրբոյ Ուստին էջմիածնի, կամքքն Աստու-ծոյ և ընտրութեամբ Աղքիս Հայոց կոչեց-եալ յԱթու Կաթողիկոսութեան Տաճան Կիլի-կիոյ, ապահնեալ յօգնականութիւն շնոր-հաց Բարձրելոյն, խոստանամ և ուստի շնոր-հացի Սրբոյ Սեղանոյս և աստուածընկալ

սուրբ նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս եպիսկոպոսապետութեան Հայաստան-եայց Եկեղեցոյ և բոլորապտուղ նուիր-մամբ ընծայել զանձն իմ յանվթար կատա-րումն աստուածադիր օրինաց և կաթողիկո-սական պարտուց, և առաջնորդել Աղքիս Հա-յոց ըստ ուղղափառ վարդապետութեան Քրիստոնէական կրօնից ըստ մերուս Եկե-ղեցոյ դաւանութեան և ըստ Հայրապետա-կան կարգաց և կանոնաց աստուծպաշ-տութեան, անստերիւր և անխոտոր ընթա-նալով յամենային ընդ լուսաշափով հետո զնացից արժանածառանդ յաջորդաց սրբոց առաքելոցն Թագէոսի և Թարթուղիմէոսի և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Կուսա-ւորչին, զգուշաւոր պահպանութեամբ իրա-ւանց Աթոռոյ Տաճան Կիլիկիոյ»:

Եվ Վեհափառը կետ առ կետ հարգեց իր ուստի այնքան ժամանակ, որքան կյանքը թույլ տվեց նրան զահակալել Հովհանքեան Աթոռութեան:

Նա անշափ սիրում էր Հայաստանյաց Ե-կեղեցին: Ես հիշում եմ նրա քարոզը Հալե-պում, 1946 թվականին, երբ այդ արարական քաղաքին տվել էր իր Հովհանքական առաջին այցելությունը:

Մովածավալ բազմությունը լցրել էր Քա-ռամնից Մանկանց եկեղեցու ներսն ու դուր-սը: Եվ Վեհափառը, ինչպես այդ օր, նույն-պես և Հաջորդ օր Կիրակինօրյա դպրոցների կազմակերպած Հանգեսին խոսեց մի ներ-շնչար քարոզ՝ Հայրենասիրության և եկե-ղեցասիրության մասին:

Հովհանքյանց Գարեգին Կաթողիկոսը ան-խպիլի կապվել էր Սովորական Միության և համաշխարհային խաղաղու-թյան մեծ գործին: Նա մակաշափ չագրվեց այն բարբազանքներից, որոնք իր հասցեին ուղղվում էին պատերազմի ամերիկա-անգ-լիական հրձիգների ծախված ազդադավների ճոնշան մամուլում: Նա պատասխանի իսկ շարժանացրեց այդ գեղին մամուլում յցրը-նը ված քննադատությունները և անսայթաքո-րեն ամեն տարի նոյեմբերի 7-ին, Հոկտեմ-բերյան Մեծ Ռևոլուցիայի տոնի առթիվ, այ-ցելեց և շնորհավորեց Սովորական Միու-թյան Բեյրութի գետպաններն, ցվերջ պահեց սովորական փառապանծ հպատակությունը և ստորագրեց ու պաշտպանեց Խաղաղու-թյան Համաշխարհային Խորհրդի Ստոկհոլմի Կոլը: Դեռևս Ամերիկայի առաջնորդ, Հայրե-նական պատերազմի ատարիներին, հօգուտ Կարմիր Բանակի՝ 120.000 դոլար, իսկ «Սա-սունցի Դավիթ» հրասալլային դորասյունին

Համար էլ ավելի քան 85.000 դոլար հանգանակելով; Նա մի անգամ ևս ապացուցել էր իր հավատարմությունը Սովետական Հայրենիքի հանդեպ:

Անթիւսա ժամանման առաջին օրը, երբ ոչրաշափառով Տաճար մտավ, կարճ աղոթքից հետո, Հայ Եկեղեցու և Հայ Նվիրապետական բոլոր Աթոռներին պայծառություն և նրանց առաջնորդներին արեշատություն մարդած ժամանակ, նա եռանդով ու սրտագին բարեմաղթություններ արավ վերածնված ու վերածաղկող Սովետական Հայաստանին:

Նա այսպես էր գրել գեռևս Միջերկրականի վրա ճանապարհորդած ժամանակ, շոգենավի մեջ, «Թիվի էջմիածին» վերնադրյալ մի հոդվածում, որ հետո տպվեց «Հասկահմեց:

«...Փոքր ինչ ավելի հաջող պայմաններում,— ուզում ենք ասել ոչ պատերազմական (այդ օրերին Հայրենական պատերազմը շարունակվում)՝ էր ամենայն կատաղությամբ— Ս. Հ.),— սա լավագույն առիթն է ոչ միայն սրատպամալորներով, այլև Հայրենաբաղ անհատների խմբերով, ուստի գնալ դեպի Խորհրդային Հայաստանը և դեպի Հայաստանյաց Եկեղեցու հինավորց Սուրբ Աթոռը, Հարուսա պատմական և սրբազն հիշատակներով: Ուրախ ենք և երախտապարտ Խորհրդային Կառավարությանը, որ լայնախոռն կերպով արտոնել է այսպիսի դժվարին պայմանների մեջ անգամ կաթողիկոսական ընտրություն կատարել, դյուրություններ ընծայելով, անշուշտ, պատգամավորների հանապարհորդության համար: Պետք է օգտվել այս ղեղեցիկ պատեհությունից և սատ կարելվույն մեծ թվով գնալ, տեսնել ավերակների տակից նոր վերակենդանացոլ Հայրենիքի վերելքը, մշակութային ամենատեսակ հաստատությունները, համայնքանը, մասնագիտական, երկրորդական և ժողովրդական դպրոցների ծաղկումը, հայ գրականության, արվեստի այլեալ ճյուղերի՝ ճարտարապետության, երաժշտության, նկարչության և այլն, նոր և առաջադեմ ընթացքը: Տեսնել պետական կյանքով ապրել սկսող ժողովրդի կենցաղը, քաղաքների վերաշինումը և հարգարումը, ճարտարապետատի նորաբողոք կյանքի երևումն ու զարգանալու ձգտումը: Ամեն տեսակ հաստատությունների մեջ, դպրոցներում, փողոցներում, դատարաններում, խանութներում, ամենուրեք տեսնել մայրենի լեզվի տիրապետությունը, որպիսի ուրախություն է հայրենաբաղ սրտերի համար: Պակաս ուրախություն կլինի՝ տեսնել մեր թանկագին Հայրենիքի բնական գեղեցկությունները՝ Արարատն ու

Արագածը, Այրարատյան դաշտի և երկրի թովիչ և երփներանդ տեսարանները՝ շուրջպար բռնած լեռներով, տեսնել Հայաստանի ամենամեծ գեղեցկություններից մեկը՝ Սևանա լիճը: Ապա նախնյաց թողած շեն կամ ավերակի, բայց միշտ խոսուն կոթողները՝ նրանց ստեղծագործության և բարեպաշտության կենդանի վկաները, Հոփիսիմեծի գողտուկ վանքը, Գեղարդա վիմափոր վանքերը, Գառնիի Տրդատա թախտը, Անիի ավերակները, գոնե հեռվից տեսնելով, իր աննման Մալր եկեղեցից և հրաշալի պարիսպներով, Չորագետի Հաղբատն ու Սանահինը իրենց բազմատեսակ շենքերով և կատարած դերով մեր արվեստի, գրչության և մշակութիւ պատմության մեջ...»:

Երջանկահշատակ Հովսեփյանց Կաթողիկոսը խոսել էր տակս փաստերը և անձամբ, որպես գրոշակիր կանգնած էր հօգուտ Սովետական Հայաստանի կատարիլած սմէն ձեռնարկի: Նա նախագահում էր Սովետական Հայաստանի տոնի՝ նոյեմբերի 29-ի հանդիսականատարություններին, խոսում ու խանդավառում էր հայ ժողովրդին: Իր անդրանիկ կոնդակում նա գրել էր. «Մի՛ մոռասցուք, թէ մեք ոստք եմք ի միոյ ծառոյն կենդանութեան Ազգիս Հայոց, որ բնակի ի պատմական Հայրենիս, ի սահմանս Խորհրդային Հայաստանին»:

Ներգաղթի տարիներին (1946—1947 թ. թ.) անշափ էր Գարեգին Կաթողիկոսի ուրախությունը: Հիշում եմ, թե ինչպես նա, եադ սրբազնի ու վարդապետների ընկերակցությամբ, երկու ժամ անցկացրեց «Տրանսիլվանիա» շերմանալում, որ, 1946 թվականի հունիսի 23-ի կիրակի օրը, դեպի Սովետական Հայրենիք փոխադրելու էր հայրենադարձների առաջին քարավանը: Օրհնելուց հետո նավապետին ու նավաստիներին, նաևն ու քարավանը, երբ Վեհափառն իշնում էր նավից, հազարավոր հայրենադարձները միահամուռ ու միաբերան երգեցին Հայկական հիմնը՝ «Սովետական ազատաշանեան»:

Սիյուռքի հայ երիտասարդության սրտում Հայաստանի հանդեպ սեր արծարծելու և արմատավորելու աշխատանքում անկարեւոր շեղավ Գարեգին Կաթողիկոսի կատարած գերը: Գաղութահայ քաղաքականության ուղղությունը գծելիս, Կիլիկիայի կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկա» ամսաթերթը գրում էր:

«...Նախ Հայաստանի հանդեպ:  
«Գաղթահայությունը պետք է սորվի բացարձակ վստահություն ունենալ հոն (Սովետական Հայաստանում — Ս. Հ.) կատարվող գործերու հանդեպ, և հետո՝ պատրաստա-

կամություն օգնելու անոր զարգացման: Այս իմաստում դիրքի ապացուցը տվավ Սփյուռք՝ վերջին տարիներում: Գաղութ շմնաց, ըլլա փոքր ու հեռավոր, որ շխանդավառվեր հայրենիքի վերաշինությամբ. ու շմնաց հայ որ իր փոքրիկ քանակն բաժին շհաներ անոր ներկա պայքարի հաղթանակին: Համակամ հավատարմության այդ դիրքը պիտի ծառաւ և սիրաշահելու Հայաստանի Կառավարության վատաշությունը Սփյուռքի հանդեպ, և ճամբաները լայնցնելու՝ հետզհետե սերտ հարաբերությանց և գործակցությանց»:

Ինչ վերաբերում է Հայաստանյաց Եկեղեցու միասնականության պահպանման դորձում Հովհանիքյանց Գարեգին Ա. Կաթողիկոսի կատարած դերին, կարելի է անվերապահուեն ասել, որ այդ դերը եղել է դերազանցապես գովելի և գնահատելի:

Հայոց Ընդհանրական Հայրապետի Աթոռի Սսից էջմիածին փոխադրվելուց ի վեր, մեծի Տանն Կիլիկիո Աթոռի գահակալ կաթողիկոսուների միջև (Գարեգին Ա. Կաթողիկոսը, Աթոռակից Բարգեն Ա. և այլ հաշված, 48-րդն էր) չկա ո՞չ մեկ կաթողիկոս, որն էջմիածնի Մայր Աթոռի հետ հաստատած լինի եղայրական այնքան սերտ հարաբերություն, որքան հաստատել է եղանակահիշատակ Հովհանիքյանց Կաթողիկոսը:

Ո՞իշտ է, որ Կիլիկիայի Աթոռը հակաթոռ չէր, այլ հարազատ մի ծիլ՝ Կիլիկիայում 11-րդ դարի վերջերում հաստատված և մինչև 15-րդ դարի վերջերը (մոտ շորո դար) տեսած հայկական իշխանության օրով Կիլիկիայի զանազան քաղաքներում առժամանակ դեգերելուց հետո վերջնականապես մայրաքաղաք Սսում տեղադրված էջմիածնի Մայր Աթոռին: Այդ ծիլ Սսում պահպանումը, Մայր Աթոռի էջմիածին փոխադրությունից հետո իսկ, քաղաքական դեգերի պարտադրանքն է եղել և հեռատեսություն՝ այդ շրջանի դեկալարների կողմից:

Դժբախտաբար, սակայն, գտնվել են կաթողիկոսներ, որոնք, անձնական փառասիրությունից ավելի, դրված սովորական և շարական կառավարությունների կողմից, խաթարել և խանգարել են փոխհարաբերությունը երկու հոգեկից ու համադաշնական Աթոռների միջև:

Հիշենք միայն Կիլիկիայի Մկրտիչ Ա. Քեյֆսիլյան Կաթողիկոսին (1818—1894 թ. թ.), որը, Սուլթան Համիդի հակառակ քաղաքականությունից թելադրված, անմիտ, անիմաստ, հայ ազգային շահների և եկեղեցական միասնականության վնասակար ուղեգիծ է տրդեգրել, էջմիածնի Մայր Աթոռի ենթակա Կոստանդնուպոլսի Պատրիարքության հիտ իրավասության խնդիր հարուցելով:

Բարեբախտաբար, Քեյֆսիլյանի հաջորդ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները ավելի իմաստում գտնվեցին և օտարների կողմից հայ ազգը պառակտելու նպատակով սարքված սաղրանքները ամլության դատապարտեցին, սերտ հարաբերություն մշակելով էջմիածնի համազգային Մայր Աթոռի և նրա արժանընտիր Հայրապետների հետ:

Քեյֆսիլյանի հաջորդ Մահակ թ. Կաթողիկոսը, որը գեռաս վարդապետ, 1881—1885 թվականներին եղել էր Կովկասում որպես նվիրակ Երուսաղեմի և ժողովրդականություն էլ շահել էր, լինելով անձնական բարեկամը էջմիածնի Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին, իր կարելին ի գործ էր զրել երկու Աթոռների միջև բացված խրամատը լցնելու և ի կենդանության որոշել էր, որպեսզի Բարգեն Ա. Աթոռակից Կաթողիկոսը անձամբ մասնակցի հանգույցյալ Խորեն Կաթողիկոսի ընտրության և օժման, նշելով միանգամայն էջմիածնի Մայր Աթոռի գերազանցությունը:

Այդ տարիների քաղաքական պայմանները արգելք եղան Աթոռակից Կաթողիկոսի գեպի էջմիածնի ճանապարհորդության, բայց նա մնաց միշտ հետևողական Հալեպի Եկեղեցում, խորանի առջև օժման ժամանակ (1931 թ.), էջմիածնի նախամեծար Աթոռի և Հայաստանյաց Եկեղեցու միասնականության հանդեպ իր կատարած հանդիսավոր ուստիին:

Արյան թունավորումից մահանալուց հագիլ մի քանի ամիս առաջ (1936 թ.), երբ Աթոռակից Բարգեն Ա. Կաթողիկոսը Անթիւիաստ սրբալույս մյուտոն էր օրհնում, բազմատեսակ անուշաբույր ծաղիկների թիւը լրացրեց էջմիածնի Կաթողիկոս Ղազար Ջանկեցու օրհնած մյուտոնով, որը բերել էր ավել Երուսաղեմից, հատկապես այդտեղ ուղարկելով Սարացյան սրբազնին:

Էջմիածնում օրհնված մյուտոնի կաթիլներում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը տեսնում էր Հայ Եկեղեցու միասնականությունը և ընդունում Ընդհանրական Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետության դերագահ հանգամանքը:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության և էջմիածնի Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետության միջև անցյալում գոյություն ունեցած տարածալնությունները լրիվ բառնալու և Հայ Եկեղեցու միասնականությունը հանուր աշխարհին հայտարարելու փառքը վիճակվեց Հովհանիքյանց Գարեգին Ա. Կաթողիկոսին, պատմական նշանակություն ունեցող մի աշխարհախոսմբ ժողովում:

Դա այն ժողովն է, որը գումարվեց 1945 ովականի հոնիսի 16-ին, ազատ, սապահով և վերածաղկյալ Սովետական Հայաստանի

ծոցում, էջմիածնի ճեմարանի դահլիճում, մասնակցությամբ Սովետական Միության և արտասահմանի բոլոր թեմական առաջնորդների և պատգամավորների, թվով 111 (որից 36-ը՝ հոգկորական և 85-ը՝ աշխարհական): Այդ ժողովում էր, որ, նախագահությամբ Մհեմ Տանն Կիլիկի շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանցի, միաձայնությամբ ընտրվեց Ամենայն Հայոց Կարողիկոս, նպական պատուապետ և Մայրապոյն Պատրիարք համազգական նախամեծար Արքոյ Այրարատեան Առաքելական Մայր Եկեղեցայ Սրբոյ էջմիածնի, Տ. Տ. Գեորգ Զայրապետը:

Հինգ հարյուր տարիներից ի վեր, առաջին անգամ, Մհեմ Տանն Կիլիկի մի կաթողիկոսը՝ Գարեգին Ա. ը ներկա էր լինում Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և ժողովի բամբից հայտարարում էր ի լուր աշխարհի. «Այս օրը բախտավորության և ցնծության օր է, քանզի երկար տարիներից ի վեր հայ ժողովրդի հովաները իրականացած են: Այս ժողովը արտաքր կարգի երևույթ է մեր պատմության մեջ. ծովեր և հեռավոր տարածություններ ոչինչ ենք համարել, և եկել ենք ցույց տալու, որ մի է Հայոց Եկեղեցին և մի է Հայոց Հայրապետությունը»:

Էջմիածնի հանդեպ տածած սերը նա արտահայտում էր էջմիածնի տոնի օրերին, երբ անձամբ նախագահելով օրվա ծիսակատարության, մասնակցում էր հատուկ շարականին.

«Էջ Միածինն է Զօրէ և լոյս փառաց ընդ նմա, Զայնք հնշեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,

Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ ըգիստրանն լուսոյ,

Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Նա անսահման փուլթեռանդությամբ գործադրեց էջմիածնի աշխարհախոռմբ աղդալին համագումարի այն որոշումը, որ վերաբերում էր Ընդհանրական Աթոռի Սպիր էջմիածին փոխադրության 500-ամյակի հոբելյանը տոնելու մասին:

Նա, համաձայն Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետի՝ Գեորգ Զ. Կաթողիկոսի կոնդակի, Կիլիկիայի Կաթողիկոսության թեմերում փառաշուրջ հանդեսներով տոնել տվեց Վարդանանց պատերազմի 1500-ամյակը:

Այդ կապակցությամբ կենտրոնական հան-

դիսակատարությունը տեղի ունենալու էր Անթիւիասում, Սուփր Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարում, իր նախագահությամբ, 1951 թվականի փետրվարի սկիզբը:

Հանկարծ մի բոթ տարածվեց, թե Գարեգին Կաթողիկոսը մահամերձ հիվանդացել էր մի սրտային մազերակի պայթման հետևանքով և փոխադրվել Բեյրութի Ամերիկան հիվանդանոցը: Սա երկրորդ դեպքն էր, առաջինը տեղի ունեցած լինելով 1950 թվականի վերջերում, Կամիրենում, երբ Վեհափառը ինքնաթիռով ճանապարհորդում էր դեպի Փարիզ: Բարերախտաբար աննկում կամքուներ Վեհափառը մահն անգամ հաղթահարելու:

— Պիտի առողջանա՞մ, — ասել էր նա Կամիրենում, և առողջացել էր զարմանքի մասնելով դարմանող մասնագետ օտար բժիշկներին, որոնք անխուսափելի նկատել էին Վեհափառը մահը:

— Պիտի շարունակն՝ ճանապարհորդությունը, — ասել էր նա և շոգենավով շարունակել էր դեպի Ֆրանսիա իր ճանապարհորդությունը և ալդենից էլ ողջ առողջ վերաբերել էր իր Աթոռը, ափիբերան թողնելով իրեն տեսական հանգիստ հանձնարարող բժիշկներին:

Հիմի էլ, երբ արյուն էր փսխում, Ամերիկան հիվանդանոցից բժիշկներն, որոնք բույս առ բույս սպասում էին նրա վախճանման, ասել էր.

— Զպիտի մահանամ, որովհետև նախագահականությանը կարդանանց պատերազմի 1500-ամյակի հանդիսությանը:

Արդարեւ Վեհափառը շմահացավ, և անգամ հիվանդանոցից Կաթողիկոսարան գուխարդեց հանդեսի համար հայտարարված թվականից մի օր առաջ, բայց, ափսուս, նա չկարողացավ նախագահել...: Վեհափառը շատ տակարացել էր:

Հանդեսը կատարվեց մեծ շոգով: Անթիւիասի Տաճարի կամարների տակ պանծացվեց Վարդանանց հիշատակը և կիրանանի ուղիուկայանը ձայնասփուեց օրվա պատարգի, ճառերի և երգերի հետ Գարեգին Կաթողիկոսի պատգամը... Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Խաղ սրբազնի բերանով:

Այդ թվականից հետո ժամանեցին Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակները՝ Վեհափառեալ արքեպիսկոպոսը և պրոֆ. Աշոտ Արքահամբեանը, բժիշկով Գեորգ Զ. Կաթողիկոսի եղբայրական ողջուններն ու բարեմաղթությունները: Սրբազն հիվանդը անշափ ուրախացավ եղբայրական այդ հոգատարու-

թյունից, բայց էլի շարունակեց մնալ Հիվանդ և ծառայել անկողնի:

1951 թվականի հունվարի 25-ին, երբ ես Բեյլովից մեկնեցի դեպի Երևան, մահվան հետ մաքառում էր Գարեգին Կաթողիկոսը։ Այդ թվականից համարյա մի տարի հետո, սույն թվականի հունիսի 21-ին, Անթիլիասի իր սիրած Աթոռի մոտ ահա հավիտենապես փակվել են նրա աշխերը։

«Էջմիածին» ամսաթերթի համար այս տողերի գրի առնված պահին, իմ աշքերի առաջ է ներկայանում Մեծի Տանն Կիլիկիո Հայութապետ Գարեգին Ա. Կաթողիկոսը, իր կարձ հասակով, բայց գործելու անօրինակ,

եռանդովը, ոմեկնդիրները հմայելու հոեառությամբը, Հայ Ազգը, Հայ Եկեղեցին, Հայաստանը, Հայ արվեստն ու պատմական արժեքները փառաբանելու բացառիկ հմտությամբն ու հեղինակությամբը։

Գիտնական և խաղաղասեր, ազգասեր ու հայրենասեր Գարեգին Ա. Կաթողիկոսը, իր օրինակելի կյանքովը, գծել է մի լուսաշող ճանապարհ։ Այդ ճանապարհից ընթանալով, Սփյուռքի հայերը ո՛չ միայն հարգած կլինեն սիրեցյալ Հովհապետի հիշատակը, այլև ապահով կհասնեն իրենց ցանկացած խաղաղության նավահանգիստը։

